Սիրեք, կիսվեք, հրավիրեք

Սիրեք

Հովհաննես 13.34–35, Մոսիա 18.20–22, Վարդապետություն և Ուխտեր 12.7–9, 121.41–42

Տասներկու Առաքյալների Քվորումից երեց Գարի Ի. Սթիվենսոնն ուսուցանել է.

Ամեն անգամ, երբ մենք Քրիստոսանման սեր ենք ցուցաբերում մեր մերձավորի հանդեպ, մենք քարոզում ենք ավետարանը, նույնիսկ եթե գեթ մեկ բառ չենք արտաբերում:

Ուրիշների հանդեպ սերը մեր մերձավորին սիրելու երկրորդ մեծ պատվիրանի պերճախոս արտահայտությունն է, այն ցույց է տալիս Սուրբ Հոգու մաքրող գործընթացը, որն աշխատում է մեր հոգիներում: Ուրիշների հանդեպ Քրիստոսի սերը դրսևորելով՝ մեր բարի գործերը տեսնողների մեջ գուցե առաջացնենք ձգտում «փառավորելու [մեր] Հորը, որը երկնքում է» [Մատթեոս 5.16]: (Գարի Ի. Սթիվենսոն, «Սիրեք, կիսվեք, հրավիրեք», *Լիահոնա*, մայիս 2022, 85)

Կիսվեք

2 Նեփի 2.6–8, Մոսիա 28.1–3, Ալմա 31.5, Վարդապետություն և Ուխտեր 60.2

Տասներկու Առաքյալների Քվորումից երեց Դիտեր Ֆ. Ուխդորֆն ուսուցանել է.

Եթե որևէ մեկը հարց է տալիս ձեր հանգստյան օրերի վերաբերյալ, առանց հապաղելու խոսեք եկեղեցում ունեցած ձեր փորձառության մասին: Նրանց պատմեք այն փոքր երեխաների մասին, որոնք հավաքվածների առաջ ջերմեռանդորեն երգեցին այն մասին, թե ինչպես են փորձում նմանվել Հիսուսին: Խոսեք երիտասարդների խմբի մասին, որոնք իրենց ժամանակը տրամադրեցին՝ ծերանոցներում օգնելով ծերերին հավաքագրել անձնական պատմությունները: . . .

Ձեզ համար սովորական և բնական եղանակներով մարդկանց հետ կիսվեք, թե Հիսուս Քրիստոսն ու Նրա Եկեղեցին ինչու են կարևոր ձեզ համար: (Դիտեր Ֆ. Ուխդորֆ, «Միսիոներական աշխատանք. կիսելով այն, ինչ կա Ձեր սրտում», *Լիահոնա*, մայիս 2019, 17)

Հրավիրեք

Հովհաննես 1.35–46, 4.28–30, 39–41, Ալմա 5.62, Մորոնի 10.3–5

Տասներկու Առաքյալների Քվորումից երեց Գարի Ի. Սթիվենսոնն ուսուցանել է.

Հարյուրավոր հրավերներ կան, որոնք կարող ենք ուղարկել ուրիշներին: Մենք կարող ենք հրավիրել մարդկանց «գալ և տեսնել» հաղորդության արարողությունը, ծխի միջոցառումը, առցանց տեսահոլովակը, որը բացատրում է Հիսուս Քրիստոսի ավետարանը: «Եկեք և տեսեք» հրավերը կարող է հրավիրել կարդալ Մորմոնի Գիրքը կամ այցելել մի նոր տաճար բաց դռների օրը՝ նախքան նվիրագործումը: Երբեմն հրավերը մի բան է, որը մենք ուղղում ենք ներս՝ հրավեր ինքներս մեզ, որը մեզ տալիս է մեզ շրջապատող հնարավորությունների գիտակցում և գործելու տեսլական: (Գարի Ի. Սթիվենսոն, «Սիրեք, կիսվեք, հրավիրեք», *Լիահոնա*, մայիս 2022, 86)

© 2024 by Intellectual Reserve, Inc. All rights reserved. PD80007812_201_602-1